## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

*Հայաստանի Հանրապետության, Շիրակի մարզի Գյումրի համայնք, Վարդանանց հր. 1*
*Հեռ. (+374 312) 3-46-05, 5-43-00; հեռապատճեն (+374 312) 3-26-06;*
*Էլ.փոստ. Gyumri@Gyumri.am*

N 1/1-01/3754

02 „ 11 2012թ.

Ձեր N ____________

„____„ ______________ 2012թ.

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ***
***ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ***
***ՊԸՆ Ա.ԳԻՁԻՐՅԱՆԻՆ***

***Հարգելի պարոն մարզպետ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի՝ ուղարկվում է Գյումրի համայնքի ավագանու 2012թվականի հոկտեմբերի 25-ին կայացած N 13 արտահերթ նիստի NN 161 – 166 որոշումները:

Առդիր՝ 7 /յոթ/ թերթից:

*ՀԱՐԳԱՆՔՈՎ՝*

***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ*** [signature] ***Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ***

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 693612
02 11 12

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
հասցե. Վարդանանց հր. 1
հեռ. /+374312/ 34605, 48701
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«25» հոկտեմբերի 2012թվականի N 161-Ա

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքապետարանում առկա փաստաթղթերի նախնական ուսումնասիրությունների արդյունքները, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շիրակի մարզի քննչական բաժնում 2012թվականի հոկտեմբերի 16-ին հարուցված քրեական գործը կապված՝ 2006-2011թթ. ընթացքում Գյումրու բնակիչներից և կազմակերպություններից աղբահանության դիմաց հավաքագրված գումարների մի մասը համայնքային բյուջե չմուտքագրելու հետևանքով համայնքին պատճառած խոշոր չափի նյութական վնաս պատճառելու փաստի հետ, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և, ելնելով համայնքի 2006-2012թթ.. ֆինանսատնտեսական գործունեության պարզաբանման և հստակեցման անհրաժեշտությունից՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Դիմել Հայաստանի Հանրապետության լիցենզավորված աուդիտորական ծառայություններ մատուցող անկախ կազմակերպությանը, կնքել համապատասխան

պայմանագիր՝ քաղաքապետարանի աշխատակազմի բաժիններում, առանձնացված ստորաբաժանումներում ընդհանուր ֆինանսատնտեսական աուդիտորական ստուգումներ անցկացնելու և արդյունքների մասին մասնագիտական եզրակացություն տալու վերաբերյալ:

2. Ֆինանսական բաժնի պետ Լ.Զիլավյանին՝ մատուցվելիք աուդիտորական ծառայությունների համար պայմանագրով նախատեսված գինը վճարել բյուջեի ֆոնդային մասից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ՄԱՆՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ ( ) ԴԵՄ ( ) ՁԵՌՆՊԱՀ՝ ( )

Հ.Պողոսյան
Մ.Սահակյան
Ա.Բաղրամյան
Չ.Զարգարյան
Գ.Ադամյան
Մ.Բադեյան
Վ.Կիրակոսյան
Հ.Զաքարյան
Թ.Համբարձումյան

25 նոյեմբերի 2012թ.
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
հասցե. Վարդանանց hp. 1
հեռ. /+374312/ 34605, 48701
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«_25_» նոյեմբերի 2012թվականի N_162_-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՆԻՔՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով, 16-րդ հոդվածի 2-րդ մասով և հաշվի առնելով քաղաքապետարանի կնիքների և դրոշմակնիքների ֆիզիկական մաշվածությունը, /առկա են ճաքեր, փոսիկներ, որոնք խախտում են տպվող մասերի ամբողջականությունը/ ինչի պատճառով դրանք հետագա գործածության համար դարձել են ոչ պիտանի՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Փոխել քաղաքապետարանի կնիքները և դրոշմակնիքները:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ նոր կնիքների և դրոշմակնիքների պատվիրման համար եռօրյա ժամկետում նախապատրաստել և համապատասխան լիազորված կազմակերպությանը ներկայացնել պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը /դիմում, որոշում, կնիքների և դրոշմակնիքների հաստատված գծապատկերները՝ իրենց չափսերով/:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ (9) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

Հ.Պողոսյան

Ա.Բաղեյան

Վ.Կիրակոսյան

Հ.Զաքարյան

Մ.Սահակյան

Ա.Բաղրամյան

Թ.Համբարձումյան

Գ.Ադամյան

Չ.Զարգարյան

25 նոյեմբերի 2012թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
հասցե. Վարդանանց հր. 1
հեռ. /+374312/ 34605, 48701
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» նոյեմբերի 2012թվականի N 163-Ն

## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 193-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և, ելնելով Գյումրու քաղաքապետարանի ֆինանսատնտեսական գործունեությունը պատշաճ կերպով իրականացնելու անհրաժեշտությունից՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գյումրի համայնքի 2011թվականի դեկտեմբերի 20-ի «Գյումրի համայնքի 2012թվականի բյուջեի մասին» N 193-Ն որոշմամբ հաստատված հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ (9) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ՝ (0)

Հ.Պողոսյան
Ա.Բաղեյան
Վ.Կիրակոսյան
Հ.Զաքարյան
Մ.Սահակյան
Ա.Բաղրամյան
Թ.Համբարձումյան
Ա.Արամյան
Չ.Զարգարյան

25 նոյեմբերի 2012թ.
ք. Գյումրի

ՀԱՎԵԼՎԱԾ

Գյումրի համայնքի ավագանու
2012թվականի հոկտեմբերի 25-ի
N 163-Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 193-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԱԾ 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

| Տողի NN | Եկամտատեսակները | Ընդամենը | վարչական բյուջե | | | | ֆոնդային բյուջե | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Տարի | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 9 ամիս | Տարի | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 9 ամիս |
| | | | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | 5 | 7 | | | | | | | | |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 35,000.0 | 35,000.0 | - | - | - | - | - | - | - |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից<br>այդ թվում՝ | 6,000.0 | 6,000.0 | | | | | | | |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 6,000.0 | 6,000.0 | - | - | - | - | - | - | - |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից<br>այդ թվում՝ | 7,000.0 | 7,000.0 | | | | | | | |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 7,000.0 | 7,000.0 | - | - | - | - | - | - | - |
| 1130 | 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ<br>այդ թվում՝ | 2,000.0 | 2,000.0 | | | | | | | |
| 1131 | Տեղական տուրքեր<br>այդ թվում՝ | 2,000.0 | 2,000.0 | | | | | | | |
| 1142 | բ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | 2,000.0 | 2,000.0 | - | - | - | - | - | - | - |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ<br>այդ թվում՝ | 4,000.0 | 4,000.0 | | | | | | | |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 4,000.0 | 4,000.0 | | | | | | | |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ<br>այդ թվում՝ | 16,000.0 | 16,000.0 | | | | | | | |
| 1353 | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | 16,000.0 | 16,000.0 | - | - | - | - | - | - | - |
| | նույն թվում | | | - | - | - | - | | | |
| | տրանսպորտային գանձումներ երթուղային տաքսիներից | 13,000.0 | 13,000.0 | - | - | - | | | | |
| | աղբահանություն | 3,000.0 | 3,000.0 | - | - | | | | | |

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 193-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՏՎԱԾ 2-6 ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդվածի NN | Ընդամենը | վարչական բյուջե | | | | ֆոնդային բյուջե | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Տարի | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 9 ամիս | Տարի | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 9 ամիս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | 35,000.0 | 35,000.0 | - | - | - | - | - | - | - |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 27,000.0 | 27,000.0 | - | - | - | - | - | - | - |
| 2110 | 01 | 1 | 0 | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | | 27,000.0 | 27,000.0 | - | - | - | - | - | - | - |
| | | | | որից՝ | | 27,000.0 | 27,000.0 | - | - | - | - | - | - | - |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում՝ | | *27,000.0* | *27,000.0* | - | - | - | - | | | |
| | | | | *1. Կառավարման մարմնի պահպանում* | | | | - | - | - | - | | | |
| | | | | -Էներգետիկ ծառայություններ | 4212 | 10,000.0 | 10,000.0 | - | - | - | | | | |
| | | | | -Կապի ծառայություններ | 4214 | 3,500.0 | 3,500.0 | - | - | - | | | | |
| | | | | -Տրանսպորտային նյութեր | 4264 | 12,500.0 | 12,500.0 | - | - | - | - | | | |
| | | | | -Այլ նպատակային նյութեր | 4269 | 1,000.0 | 1,000.0 | - | - | - | | | | |
| 2900 | 09 | 0 | 0 | *Կրթություն* | | 8,000.0 | 8,000.0 | - | - | - | | | | |
| | | | | որից՝ | | | | | | | | | | |
| 2910 | 09 | 1 | 0 | Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն | | 8,000.0 | 8,000.0 | - | - | - | - | - | - | - |
| | | | | այդ թվում՝ | | *8,000.0* | *8,000.0* | - | - | - | - | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | *Նախադպրոցական կրթություն* | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | - | | - | | | - | | | |
| | | | | սուբսիդիա | 4511 | 8,000.0 | 8,000.0 | - | | | | | | |

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
-ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏԻ Ժ/Պ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
հասցե. Վարդանանց հր. 1
հեռ. /+374312/ 34605, 48701
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հոկտեմբերի 2012թվականի N164-Ա

### ԳՅՈՒՄՐՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի կազմակերպման կարգի, գետնանշման, տեղական տուրքի գանձման հետ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության վերջին որոշումները՝ 2012թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոկայանատեղիների կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 1293-Ա, 2012թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոկայանատեղիների /որի համար նախատեսվում է տեղական տուրքի գանձում/ գետնանշման ձևը սահմանելու մասին» N 1281-Ն, հիմք ընդունելով բնակիչների կողմից ստացված բողոքները կապված ավտոկայանատեղիներում գործունեություն իրականացնող պատասխանատու անձանց կողմից սիստեմատիկորեն կրկնվող խախտումների /ՀԴՄ կտրոններ չտրամադրելը, գծանշումների բացակայությամբ քաղաքացիներին սպասարկելը ոգելից խմիչքներ օգտագործած վիճակում և այլն/ փաստը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Վերանայել ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերը և օրենքով սահմանված կարգով տալ համապատասխան ընթացք:
2. Թույլատրել կնքելու նոր պայմանագրեր, որոնցում հաշվի առնել Հայաստանի Հանրապետության կառավարության ընդունած վերջին որոշումների դրույթները:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ (9) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

Հ.Պողոսյան

Մ.Սահակյան

Ա.Բադեյան

Զ.Զարգարյան

Վ.Կիրակոսյան

Հ.Զաքարյան

Ա.Բաղրամյան

Թ.Համբարձումյան

Գ.Աղամյան

25 հոկտեմբերի 2012թ.
ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
հասցե. Վարդանանց հր. 1
հեռ. /+374312/ 34605, 48701
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«_25_» նոյեմբերի 2012թվականի N 165-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թվականի հունիսի 12-ի N 642-Ա որոշման դրույթներով և, ելնելով Գյումրի քաղաքի պատմամշակութային և քաղաքաշինական միջավայրի վերականգնման և զարգացման անհրաժեշտությունից՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գյումրի համայնքի ղեկավարին կից ստեղծել խորհրդակցական մարմին՝ ճարտարապետական և քաղաքաշինական խորհուրդ, որը կգործի հասարակական հիմունքներով:
2. Խորհրդի կազմում ընդգրկել Հայաստանի Հանրապետությունում հայտնի փաստակաշատ ճարտարապետների, Գյումրու պատմա-ճարտարապետական քաղաքաշինական առանձնահատկություններին քաջատեղյակ մասնագետ շինարարների:
3. Խորհրդին տալ լիազորություններ՝
   1) իր կազմից առաջադրելու քաղաքի գլխավոր ճարտարապետի թեկնածությունը,
   2) ի լրումն քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված գործող նորմերի իրականացման ենթակա լրացուցիչ պայմանների կարգի սահմանման և դրա կատարման վերահսկողության իրականացում:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ (9) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

Հ.Պողոսյան

Ա.Բաղեյան

Վ.Կիրակոսյան

Հ.Զաքարյան

Մ.Սահակյան

Ա.Բաղրամյան
Թ.Համբարձումյան
Գ.Աղամյան
Թ.Զարգարյան

25 նոյեմբերի 2012թ.
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
հասցե. Վարդանանց հր. 1
հեռ. /+374312/ 34605, 48701
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » նոյեմբերի 2012թվականի N 166 -Ա

### ՄԻՇԱ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել «Անի» թաղամասի Ե. Չարենցի փող.33 շենքի բնակիչ Միշա Կուրղինյանը դրամական օգնություն ստանալու խնդրանքով: Այրվել է վերը նշված հասցեում գտնվող շենքի կտուրի մի մասը:Այրված մասի վերանորոգման համար չունեն համապատասխան միջոցներ և գտնվում են սոցիալապես վատ պայմաններում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով ժամանակավոր հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքները, հաշվի առնելով քաղաքացի Միշա Կուրղինյանի սոցիալապես վատ պայմանները և ելնելով հարցի հրատապ լուծման անհրաժեշտությունից՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Միշա Կուրղինյանին Գյումրի համայնքի բյուջեի այլ ծախսերից կանխիկ հատկացնել 205000 /երկու հարյուր հինգ հազար /դրամ օգնություն:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ (9) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ՝ (0)

Հ.Պողոսյան

Ա.Բադեյան

Վ.Կիրակոսյան

Հ.Զաքարյան

Մ.Սահակյան

Ա.Բաղրամյան

Թ.Համբարձումյան

Գ.Աղամյան

Շ.Զարգարյան

25 նոյեմբերի 2012թ.
ք. Գյումրի